ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Մերձավան, (096)110044 merzdavan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

8 հուլիսի 2019 թվականի N107-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N470-Ն և 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշումների դրույթներով, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով ԱՁ <<Կարեն Մաչանյան>> -ի /որակավորման վկայական 0244, տրված 2012 թվականի հոկտեմբերի 29-ին/ կողմից 2019 թվականի հուլիսի 8-ին տրված հողամասի և շինությունների հատակագծերը և 2019 թվականի հուլիսի 8-ին Վահագն Գագիկի Բարսեղյանի դիմումը, **որոշում եմ.**

1. Վահագն Գագիկի Բարսեղյանին սեփականության իրավունքով պատկանող /կադաստրային համար՝ 04-065-0026-0019, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N10092018-04-0026/ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի 3-րդ փողոցի N22 հասցեում գտնվող, հողակադաստրային տարածագնահատման 9-րդ գոտու, բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման 0,08 հեկտար հողամասի վրա ինքնակամ կառուցված 109,8 քառակուսի մետր արտաքին մակերեսով շենք-շինությունը ճանաչել օրինական:

2. Քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող հողամասում գտնվող ինքնակամ կառույցների օրինականացման վճարը բնակելի տան մեկ քառակուսի մետրի համար 1700 ՀՀ դրամ է.

109,8 քառակուսի մետր բնակելի տան օրինականացման վճարը կազմում է՝ 109,8 x 1700 = 186 660ՀՀ դրամ:

Վահագն Գագիկի Բարսեղյանը պարտավոր է սահմանված գումարը՝ 188 660ՀՀ դրամը վճարել Մերձավան համայնքի բյուջեի N900325175157 գանձապետական հաշվին:

3. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4.Սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման նպատակով որոշման մեկ օրինակը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի մարզերի միավորված ստորաբաժանում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2019 թվականի հուլիսի 8

համայնք Մերձավան